

## ՀՐԱՆՏ ՎԱՐՈՒԹՅԱՆ

(III դասարանի սան)

## ԱՎԱՐԱՅՐ



Վարդանանք... Այս անունը հայու սրտին մեջ իր տեղն ունի: Ամեն Վարդանանց տոնին հայր մտովին կրալ դեպի Ավարայր, Տղմուտ գետն ի վեր:

Մենք ալ, ընթերցող, պահ մը փոխադրվինք հինգերորդ դար: Քալինք Վարդանանց հետ, ազգի ու Աստուծո պաշտպանության ոգիով բեռնավորված, դեպի Ավարայր, դեպի զաշտը նվիրական, ուր «իմացեալ մահ» ընդունեցին նախնիքը մեր քաջարի:

\*\*\*

451... Մայիսյան շքնաղ երեկո... Արևը իր խորհրդավոր բոսոր ճառագայթներովը կրողարկե Հայոց Աշխարհի բարձրաբերձ լեռներ՝ ավելի շեշտելով անոնց գեղեցկությունը:

Հուզված է Հայկական լեռնաշխարհը... Վաթուուն և վեց Հավաք բաղկացած թափուրը, իր գլուխն ունենալով Հովսեփը սուրբ, Ղեռնդը երեց և Վարդանը վեհ ու կորովի, կրալ լեռներն վար դեպի Ավարայր, դեպի Հայկանակ... համ գուցե մահ...:

Տակավին մութը չիջած անոնց աշքին կը- րացմի Ավարայր՝ Տղմուտ գետով ակոսված: Անդին, գետի մյուս ափին պարսից զորքն է ահա բանակել, զինված գիշերով:

\*\*\*

Իրիկնային մութին Գետ կմարմնանա նաև խորհրդը հեացող գիշերվան: Ու գիշերվան խորհրդավորության մեջ կհնչէ ձայնը Վարդանի: «Եղբայրներ, գիտե՞ք, որ մենք եկել ենք մահ ընդունելու և մեր մահովն իսկ ապրելու... Ծն, ուրեմն եղբայրներ, այս գիշեր արշալույսը շրոնկած մեր արյունով մենք կգրինք Հայոց պատմության կարմիր էշերեն մինը... Ուրեմն շերկնչենք մահվան ստվերեն, որ մեր գլխներուն վերեր կսավառի: Երդուունք մեր պապերի Սուրբ Ավետարանին

## Հրանտ Վարության

փա, Հավատարիմ մնալ հայ եկեղեցին ու ազգին, մեր արյունովը, մեր մահովը պաշտամանել զանոնք...»:

Ու պահ մը լուռ է Վարդանը... Զայներ կը- փոթորկեն ամեն կողմե, «Այո», մեր արյունո- վը, մեր մահովը կապատպանենք»:

Նորեն Վարդանն է, որ հովված կիսուի, «Եղբայրներ, պահ մը քալինք մեր հոգինե- րուն հետ գեպի նրկինք, ընդունինք մեր մեջ սուրբ ու գերագույն ուժը Աստուծու: Թող լվացմի մեր հոգին ու Տերը իր զորությամբ բնակի մեր մեջ, թող օրհնվեն մեր սրերը՝ ոչնչացնելու համար հեթանոս ուժը, բռնու- թյունը...»:

\*\*\*

Մայիսյան աստղածոր երկնքի տակ ծունկի է հայոց ամբողջ զորքը. գիշերային հոգեկ- մայլ պատարագ է տեղի ունենում... Պատա- րագում է Ղեռնդ երեցը: Հաղորդությունն վերջ Հավսեփը սուրբ կործնե հայոց քաջերն ու անոնց զինքերը:

Պատերազմը կրոնի արշալույսին բռնկ- մանը հետ... ու կվիրշանա արեին զագաղու- մովը:

\*\*\*

Գիշեր է...

Հայոց Հավար ու երեսուն վեց Հաղթական մարտիրոսները անխոռվ կբնանան Ավարայրի արյունուա կրծքին վրա... Լուսինը ամպերու շուրթերեն իր լուսե լեզվակները հանելով մեղմիկ կիսկ ինկածներուն վերքերը...

Այդ գիշեր հայ մայրերուն, Հայրերուն, քույրերուն, կիներուն ու մանուկներուն հետ լացին և աստղերը... ու լացավ նաև Աստ- ուած... որովհետեւ անոնք ինկան իրեն Հա- մար...»: